ԳԼՈՒԽ ԺԴ.

1920 ԹԻՒ ԱՄԱՌԸ

Բոլշեւիկեան շարժումը ճնշելուց յետոյ, իրերի տրամաբանական թելադրանքով, կառավարութեան առջեւ եկաւ Թրքաբնակ վայրերի գրաւման հարցը: Մի շարք շրջաններ՝ Զանգիբասարում, Վեդիբասարում, Ջուլ, Կողբ և այլն — էլ չենք խօսում Շարուր-Նախիջեւանի մասին — մնում էին Հայաստանի իշխանութեան նկատմամբ ապստամբ վիճակում. ո՛չ միայն չէին ճանաչում նրան, այլ և անվերջ յարձակումներով, սպանութիւններով ու թալանով դժուարացնում էին Հայաստանի կազմակերպման և վերաշինութեան գործը: Շարուր-Նախիջեւանում իշխանութիւնը փաստօրէն անցել էր Անդրայի զինուորական գործակալ Խալիլ-բէյի ձեռքը: Սրա ազդեցութիւնը տարածւում էր և Վեդի բասարի ու Զանգի բասարի վրա, որոնք ամրացուած էին ոչ միայն տեղական այլ և թիւրք ասկերներով: Զանգի բասարում փորուած էին անառիկ դիրքեր: Իլխի-Ղորուղի գիւղում դրուած էր թնդանօթ: Ռազմագիտական կարևոր դիրքերը բռնուած էին զօրամասերով ու գնդացիրներով: Գլխաւոր կէտերը միացուած էին իրար հետ հեռախօսով: Թիւրքիայից ստացւում էր մեծ քանակութեամբ փամփուշտ ու ռազմամթերք: Զինուորական տեսակէտից, շատ լաւ կազմակերպուած ու ամրացուած էր և Բէյոյիւք Վեդին: Այս բոլոր շրջանները միասին կազմում էին «Հարաւ-Արևմտեան Ազրբէջան»ը, ուր իշխանութիւնը խառն էր՝ թիւրք-ազրբէջանեան:

Օգտուելով մայիսեան դէպքերից յետոյ ստեղծուած ռազմական ու հոգեբանական նպաստաւոր դրութիւնից՝ կառավարութիւնը անցաւ գործի. յունիս 18-ին Զանգի բասարին ներկայացուց վերջնագիր՝ ճանաչելու Հայաստանի իշխանութիւնը, զինաթափուելու և հեռացնելու թիւրք-ազրբէջանեան գործակալներին: Զսանալով պատասխան՝ կառավարութիւնը հրամայեց Վաղարշապատի զօրախմբին՝ զէնքի ուժով գրաւելու Զանգիբասարը: Եւ մի քանի օրում շրջանը գրաւուեց:

Զօրախմբի հրամանատար գնդ. Շահմազեանը այսպէս էր նկարագրում զինուորական գործողութիւնները.

«Յունիս 19-ին Նորագաւիթի զօրասիւնը ճեղքեց հակառակորդի դիրքերը Աղջա-Ղշլաղ-425 բարձունք-411 բարձունք ճակատի վրա և գրաւեց Հաջի-էյլաղ գիւղը: Այսպիսով ողջ զանգիբասարեան դիրքերի բանալին խլուեց խռովարարների ձեռքից, որով և Զանգիբասարի բախտը նախորոշուեց: Փարաքարի զօրասիւնը գրաւեց Գէօյգիմբէթ, Քէլալի և Արբաթ գիւղերը: